«Անկախ դիտորդ»

հասարակական դաշինք

2021 թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ դիտարկման միջանկյալ զեկույց

Նախընտրական քարոզչության օրենքով սահմանված ժամանակահատվածին նախորդող ժամանակահատված

/01.05.2021-06.06.2021/

Զեկույցի հրապարակումն իրականացվել է «Բլեք Սի Թրասթ», «Սիգրիդ Ռոզինգ Թրասթ» և Բաց Հասարակության հիմնադրամներ - Հայաստան հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ: Սույն հրատարակության բովանդակության համար պատասխանատու է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքն՝ ի դեմս Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Իրազեկ քաղաքացիների միավորում, Ուղղակի ժողովրդավարություն, Գյումրու առաջընթաց, Գյումրու Ռեստարտ նախաձեռնությունների կենտրոն ՔՀՁ և Կանանց իրավունքների տուն հասարակական կազմակերպությունների: Հրապարակման բովանդակությունը կարող է չհամընկնի ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետների հետ:

Բովանդակություն

Առաջաբան 4

Դիտարկման մեթոդաբանությունը 5

Ընտրական օրենսդրություն 7

Ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններն ու դաշինքները 8

Քաղաքական համատեքստն ու նախընտրական մթնոլորտը 11

Դիտարկման ընթացքում արձանագրված խախտումները 13

Պաստառներ և դրանց վնասումը («Պաստառային առաջին պատերազմ») 13

Բռնություններ և ճնշումներ 14

«Բարեգործություն» և ընտրակաշառքի այլ դրսևորումներ 15

Վարչական/բիզնես ռեսուրսների կիրառում 18

Աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրներ 19

«Անկախ դիտորդ» դաշինքի կողմից իրականացված գործողությունների ամփոփում 19

«Անկախ դիտորդ» դաշինքի մասին 22

Առաջաբան

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծած պատերազմի և դրա հետևանքների պատճառով առաջացած քաղաքական ճգնաժամը լուծելու համար Ազգային ժողովում խմբակցությունները ներկայացնող քաղաքական ուժերը համաձայնության եկան՝ 2021 թ. հունիսի 20-ին անցկացնել Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններ[1]: Ազգային ժողովի արձակման սահմանադրական հիմքերի ստեղծման համար՝ 2021 թ. ապրիլի 25-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրաժարական տվեց և երկու անգամ չընտրվեց վարչապետի պաշտոնում: 2021 թ. մայիսի 10-ին Ազգային ժողովն արձակվեց և ՀՀ Նախագահը նշանակեց արտահերթ ընտրություն:[2]

Թեև իրավական առումով նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամանակահատվածին նախորդող փուլը գրեթե չի սահմանափակվում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ արտահերթ ընտրությունների վերաբերյալ հայտարարությունն անգամ նախընտրական քարոզչության փաստացի մեկնարկի հիմքը հանդիսացավ:

Ըստ այդմ՝ այս փուլի դիտարկումն առանցքային է բուն ընտրական գործընթացների ձևավորման, նախապատրաստման փուլի գնահատման համար:

Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին ընդառաջ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքն իր դիտորդական առաքելությունն սկսեց նախաքարոզարշավային շրջանի երկարաժամկետ դիտարկմամբ՝ 2021 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 6-ը ժամանակահատվածում:

Նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակահատվածում դիտարկումն իրականացվել է 24 դիտորդի կողմից, որոնց հիմնական արձանագրումներն ու խախտումների որոշ դրսևորումներ ամփոփված են ներկայացվող զեկույցում:

---

[1] Հունիսի 20-ին կանցկացվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ. վարչապետ, https://www.azatutyun.am/a/31157474.html

[2] Ազգային ժողովի արտահերթ ընտրություն նշանակելու մասին ՀՀ Նախագահի հրամանագիր https://www.president.am/hy/decrees/item/5249/

Դիտարկման մեթոդաբանությունը

«Անկախ դիտորդ» դաշինքի 2021 թ. երկարաժամկետ դիտարկումն իրականացվում է 2 փուլով:

1. 2021 թ. մայիսի 1-ից մինչև նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամանակահատվածի մեկնարկի դիտարկում,
2. երկրորդ փուլը՝ նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամանակահատվածի՝ 2021 թ. հունիսի 7-ից 18-ի դիտարկում:

Առաջին փուլի դիտարկումն իրականացվում է Հանրապետության ողջ տարածքում՝ մարզերի և Երևան քաղաքի առանձին վարչական շրջանների մակարդակով և դիտարկման հիմնական խնդիրներն են.

- Հավաքների դիտարկում, որը ներառում է ինչպես ընտրությունների հետ ուղղակի կապ ունեցող, այնպես էլ սոցիալական խնդիրների բարձրաձայնման կամ այլ քաղաքական օրակարգերով հավաքների, երթերի, բողոքի այլ ակցիաների դիտարկում, հնարավոր դերակատարների և նրանց գործունեության քարտեզագրում
- Կուսակցությունների գրասենյակների դիտարկում, հանդիպումներ, հարցազրույցներ կուսակցությունների ներկայացուցիչների հետ
- Պետական կառույցների և համայնքային նշանակության կառույցների, համայնքապետարանների, բնակավայրերի կամ վարչական շրջանների ղեկավարների գործողությունների դիտարկում,
- Բարեգործական գործունեության դիտարկում, որը կարող է առնչվել ընտրողների կաշառմանը,
- Նախընտրական ժամանակահատվածում աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրների դիտարկում,
- Ընտրատարածքային հանձնաժողովների աշխատանքների դիտարկում,
- Հարցազրույցներ քաղհասարակության տեղային կազմակերպությունների հետ և տեղեկատվական աղբյուրների համալրում,
- Մարզային թերթերի, ռադիոների, հեռուստատեսությունների քաղաքական հաղորդաշարերի, հաղորդումների, հոդվածների արձանագրում՝ առկայության դեպքում:

Երկրորդ փուլի դիտարկումը ևս իրականացվում է Հանրապետության ողջ տարածքում՝ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների մակարդակում:

Երկրորդ փուլի դիտարկման առանցքներն են.

- Քարոզարշավի ընթացքում թեկնածու կուսակցությունների քարոզարշավը վարելու մարտավարությունը և օգտագործվող հռետորաբանությունը,
- Թեկնածու կուսակցությունների աշխատանքային էթիկան, ընտրական շտաբների կառուցվածքը և ֆինանսավորումը,

- Ընտրական վարչարարություն իրականացնող կառույցների, ՏԻՄ և պետական մարմինների ներկայացուցիչների և ծառայողների վարքագիծը՝
    - համագործակցությունը կամ խոչընդոտումը,
    - ներգրավվածությունը քարոզարշավում,
    - քարոզարշավի ընթացակարգային մասի հանդեպ վերահսկողությունը,
- Ռադիո, հեռուստատեսության, առցանց և տպագիր ԶԼՄ-ների վարքագիծը քարոզչության փուլում՝
- քարոզչության հավասար լուսաբանում,
- գովազդման կամ լուսանցքայնացման (օր. հատուկ չլուսաբանելու) միջոցով քարոզչական կամ հակաքարոզչական գործունեություն,
- դիտարկվող տարածքում հիմնական ԶԼՄ-ների բովանդակության վերլուծություն՝ ըստ քարոզարշավին մասնակցող քաղաքական ուժերի,
- սոցիալական ցանցերի տեղեկատվության ուսումնասիրություն:

Դիտարկման երկրորդ փուլի նախնական ամփոփման արդյունքները կներկայացվեն 2021 թ. հունիսի 18-ին, իսկ դիտորդական առաքելության ամբողջական և վերջնական արդյունքները կներկայացվեն առաքելության վերջնական զեկույցում:

Ընտրական օրենսդրություն

Ընտրական օրենսդրության բարեփոխումների իրականացման համար 2019 թ. Ազգային ժողովում ձևավորվեց ԱԺ խմբակցություններից բաղկացած աշխատանքային խումբ, որը մասնակցային և ներառական գործընթացի միջոցով մշակեց «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի, Ընտրական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ և հարակից օրենքների փոփոխությունների փաթեթները:

2020 թ. հունիսի 18-ին տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ Օրենսգրքի փոփոխություններն ընդունվեցին 99 կողմ, 0 ձեռնպահ և 0 դեմ հարաբերակցությամբ: 2020 թ. դեկտեմբերի 29-ին «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխություններն ընդունվեցին 99 կողմ, 1 ձեռնպահ և 0 դեմ հարաբերակցությամբ:

2021 թ. մարտին ԱԺ «Իմ Քայլը» խմբակցությունը շրջանառության մեջ դրեց Օրենսգրքի փոփոխությունների մեծ փաթեթը՝ զուգահեռաբար ուղարկելով այն Եվրոպայի խորհրդի խորհրդատվական մարմին՝ Վենետիկի հանձնաժողով:

Արտահերթ ընտրությունների անցկացման վերաբերյալ քաղաքական համաձայնության հայտարարությունից հետո Օրենսգրքի փոփոխությունների ընդունման հարցը դարձավ անորոշ: Թեև քաղաքական ուժերի գերակշիռ մասը կողմ էր ընտրակարգի փոփոխությանը, սակայն որոշ ուժեր ներկայացնում էին փաստարկ այն մասին, որ միջազգային լավագույն փորձի տեսանկյունից ընտրական օրենսդրությունը պետք է լինի կանխատեսելի և համապատասխանաբար՝ մեծ փոփոխությունների չպիտի ենթարկվի ընտրություններից մինչև 1 տարի առաջ:

Քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպություններ տարածեցին հայտարարություններ՝ արտահերթ ընտրություններից առաջ Օրենսգրքի փոփոխությունների ընդունման անհրաժեշտության մասին՝ հատկապես կարևորելով առանց տարածքային ցուցակների պարզ համամասնական ընտրակարգի ընդունումը, վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում և Քրեական օրենսգրքում փոփոխությունների կատարումը:[3] Հաշվի առնելով երկարատև ու բազմաշահագրգիռ քննարկումները՝ կազմակերպությունները փաստարկում էին, որ Օրենսգրքի այս փոփոխությունները պետք է դիտարկվեն որպես կանխատեսելի և ընդունելի, քանի որ պարզեցնում են ընտրակարգը և վայելում գրեթե բոլոր քաղաքական ուժերի ու շահագրգիռ կողմերի աջակցությունը: Ազգային ժողովի իշխող «Իմ քայլը» խմբակցությունը որոշում կայացրեց ընդունել Օրենսգրքի փոփոխությունները միայն համամասնական ընտրակարգի մասով: Օրենսգրքի փոփոխությունների առանձնացված նախագիծը 24-ժամյա ռեժիմով ընդունվեց 2021 թ. ապրիլի 1-ին՝ 82 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ.

---

[3] Արտահերթ ընտրությունների անցկացում միայն փոփոխված օրենսգրքով. հայտարարություն https://hcav.am/joint-statement-16-03-2021/
Օրենսգիրքի փոփոխությունները չընդունելու պատճառաբանությունները քաղաքական կամքի բացակայության նշան են https://hcav.am/joint-statement-21-03-2021/

փոփոխություններին կողմ քվեարկեցին միայն իշխող «Իմ քայլը» խմբակցությունը և նախագծի համահեղինակ անկախ պատգամավորները: Ողջունելով այս փոփոխության ընդունումը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կոչ արեցին ընդունել ազատ և արդար ընտրությունները երաշխավորող մյուս փոփոխությունները ևս:[4]

2021 թ. ապրիլի 17-ին ՀՀ Նախագահը հայտարարություն տարածեց, որում հղում կատարելով մեկ տարի ժամկետի պահպանման սկզբունքին, նշեց, որ չի ստորագրի փոփոխությունները, միաժամանակ չի դիմի Սահմանադրական դատարան՝ փոփոխությունների սահմանադրականությունը որոշելու համար: Արդյունքում Սահմանադրությամբ սահմանված 21-օրյա ժամկետը լրանալուց հետո Ազգային Ժողովի նախագահը 2021 թ. ապրիլի 22-ին ստորագրեց փոփոխությունների մասին օրենքը:

Նույն օրը Վենետիկի հանձնաժողովը հրապարակեց իր կարծիքը Օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ: Փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը բացառիկ դրական էր, այդ թվում՝ ժամկետների չպահպանման բացառություններն ընդունելու առումով:

2021 թ. ապրիլի 27-ին Ազգային ժողովն ընդունեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ և Քրեական օրենսգրքերում փոփոխությունները, որոնք ՀՀ Նախագահը ստորագրեց մայիսի 6-ին: Այս դրույթներն ուժի մեջ մտան հրապարակման հաջորդ օրը՝ կիրառելի դառնալով առաջիկա արտահերթ ընտրությունների ժամանակ:

Օրենսգրքի ամբողջական փաթեթը Ազգային ժողովի կողմից ընդունվեց մայիսի 7-ին: ՀՀ Նախագահն այս փաթեթը ստորագրեց մայիսի 27-ին: Այս փաթեթով ընդունված փոփոխություններն ուժի մեջ են մտնում աստիճանաբար և կիրառելի չեն լինի Ազգային Ժողովի առաջիկա արտահերթ ընտրություններին:

Հաշվի առնելով, որ դիտարկվող ժամանակահատվածում կիրառելի չեն նախընտրական քարոզչության փուլի հիմնական կարգավորումները՝ այս փուլի նկատմամբ առավել վերաբերելի են «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները և դրանց խախտումների պատասխանատվությունը սահմանող քրեական և վարչական իրավախախտումների օրենսգրքերի նորմերը:

Ընդունված փոփոխությունների բովանդակությանը և դրանց վերաբերյալ ներակայացված առաջարկություններին «Անկախ դիտորդ» դաշինքն առավել մանրամասն կանդրադառնա դիտորդական առաքելության վերջնական զեկույցում:

[4] Ընտրական բարեփոխումների գործընթացը պետք է հասցվի ավարտին. հայտարարություն https://hcav.am/election-2021/

Ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններն ու դաշինքները

2021 թ. ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցելու համար առաջադրվեցին 23 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք: Կուսակցություններից մեկը՝ Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը հետ վերցրեց առանձին առաջադրման դիմումը՝ առաջադրվելով դաշինքի կազմում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդյունքում գրանցեց 22 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք, որոնցում առաջադրված թեկնածուների ընդհանուր թիվը 2605 է:

Արտահերթ ընտրություններին փաստացի մասնակցում են ՀՀ բոլոր նախկին ղեկավարները:

2021 թ. մայիսի 31-ի դրությամբ գրանցված թեկնածուների վերաբերյալ թվական տվյալներն առավել մանրամասն ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

N	Կուսակցություն/Դաշինք	Առաջին եռյակ	Հիմնական ցուցակ	որից կին	տոկոս	ԱՓ ցուցակ	որից կին	Պատգամավորի թեկնածության գրանցումը մերժելու թիվը
1	«Արդար Հայաստան» Կուսակցություն	Նորիկյան Նորիկ Գվիդոնի Զորանյան Սարգիս Վլադիմիրի Նուրբեկյան Մարինե Նորիկի	84	34	40.48%	0	0	1
2	«Հայ Ազգային Կոնգրես» Կուսակցություն	Տեր-Պետրոսյան Լևոն Հակոբի Զուրաբյան Լևոն Արամի Գաբայան Ինեսսա Սարիբեկի	101	33	32.67%	3	1	0
3	«Քաղաքացիական Պայմանագիր» Կուսակցություն	Փաշինյան Նիկոլ Վովայի Միրզոյան Արարատ Սամվելի Մակունց Լիլիթ Կամոյի	157	53	33.76%	4	0	0
4	«Զարթոնք» Ազգային Քրիստոնեական Կուսակցություն	Զոհրաբյան Արա Գագիկի Նալչաջյան Կարինե Աղաբեկի Թարգյան Արտեմ Վարուժանի	92	35	38.04%	0	0	9
5	Ազատություն Կուսակցություն	Բագրատյան Հրանտ Արարատի Բատիկյան Ինդա Գրիշայի Ավետիսյան Արամայիս Զորիկի	83	33	39.76%	0	0	3
6	«Պատիվ Ունեմ» Դաշինք	Վանեցյան Արթուր Գագիկի Մարգարյան Տարոն Անդրանիկի Մկրտչյան Աննա Արայի	230	80	34.78%	0	0	0
7	Միասնական Հայրենիք Կուսակցություն	Ավագյան Լուսինե Աբոյի Պարսամյան Տիգրան Արամի Մարաբյան Տիգրան Սարիբեկի	86	37	43.02%	0	0	2
8	Համահայկական Ազգային Պետականություն (Հապ) Կուսակցություն	Վարդանյան Արթուր Վալերիկի Մինասյան Գոռ Մարգպետունու Մեծոյան Մարիամ Կարապետի	82	36	43.90%	0	0	0
9	Լուսավոր Հայաստան Կուսակցություն	Մարուքյան Էդմոն Հրաչիկի Գեղամյան Արտյոմ Աշոտի Սամսոնյան Անի Տաճատի	107	35	32.71%	0	0	0

10	Մեր Տունը Հայաստանն է Կուսակցություն	Ուտիխանյան Տիգրան Խաչատուրի Այվազյան Վարդան Նորիկի Գուլքանյան Սոնա Սերգոյի	88	29	32.95%	0	0	0
11	«Հանրապետություն» Կուսակցություն	Սարգսյան Արամ Զավենի Զեյնալյան Արտակ Հայկազի Խաչատրյան Անի Արշալույսի	103	35	33.98%	0	0	0
12	«Հայոց Հայրենիք» Կուսակցություն	Գալստյան Արտակ Գավրուշայի Եղոյան Անահիտ Մկրտիչի Նավասարդյան Խաչատուր Ռադիկի	90	32	35.56%	0	0	0
13	Ազատ Հայրենիք Դաշինք	Հայրապետյան Միքայել Հրաչիկի Ղուկասյան Անդրիաս Մարատի Խաչատրյան Անանման Լավրենտի	81	28	34.57%	0	0	2
14	«Բարգավաճ Հայաստան» Կուսակցություն	Ծառուկյան Գագիկ Կոլյայի Մելքումյան Միքայել Սերգեյի Տոնոյան Իվետա Սասունի	92	31	33.70%	3	3	1
15	Հայաստանի Դեմոկրատական Կուսակցություն	Արզաքանցյան Տիգրան Գրիշայի Սարգսյան Արամ Գասպարի Դիլբարյան Նարինե Հակոբի	87	34	39.08%	0	0	1
16	«5165 Ազգային Պահպանողական Շարժում» Կուսակցություն	Տոնոյան Կարին Վազգենի Գրիգորյան Արսեն Հովսեփի Թամամյան Գևորգ Նաիրիի	95	41	43.16%	0	0	0
17	«Քաղաքացու Որոշում» Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցություն	Սահակյան Սուրեն Սարգսի Հակոբյան Գոռ Աշոտի Հոհաննիսյան Իրինա Պարույրի	85	31	36.47%	0	0	0
18	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների Դաշինք»	Բաբաջանյան Արման Շամիրի Շիրինյան Լևոն Ղազարի Սաֆարյան Սեդա Սերյոժայի	89	32	35.96%	0	0	1
19	«Ազգային Օրակարգ» Կուսակցություն	Հակոբյան Արա Լևոնի Գասպարյան Արա Սպարտակի Հակոբյան Տաթևիկ Սամվելի	84	35	41.67%	0	0	0
20	Վերելք Կուսակցություն	Մինասյան Ալեքսան Գրիգորի Հարությունյան Արտակ Էլմիրի Աղաջանյան Արսինե Սերգեյի	83	30	36.14%	0	0	0
21	Ազատական Կուսակցություն	Բաբայան Սամվել Անդրանիկի Ռափյան Սիրանուշ Եգորի Սուքիասյան Սերգեյ Սպարտակի	80	28	35.00%	0	0	0
22	«Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» Կուսակցություն	Ասրյան Խաչիկ Մայիսի Պարոնյան Արայիկ Սաշիկի Վաղրամյան Արմինե Մարտինի	87	29	33.33%	0	0	0
23	Հայաստանի Եվրոպական Կուսակցություն	Խզմալյան Տիգրան Էդուարդի Հախվերդյան Ռուբեն Լևոնի Կարապետյան Մարգանուշ Սեդրակի	89	31	34.83%	0	0	1
24	Հայաստան Դաշինք	Քոչարյան Ռոբերտ Սեդրակի Սաղաթելյան Իշխան Վաչիկի Գրիգորյան Աննա Արամի	153	47	30.72%	3	1	0
25	«Ազգային-ժողովրդավարական Բևեռ» Համահայկական Կուսակցություն	Գասպարյան Վահե Քրիստափորի Ավետիսյան Վարուժան Պարսամի Չոբանյան Կառա Ռուբենի	110	42	38.18%	0	0	4
26	«Ինքնիշխան Հայաստան» Կուսակցություն	Սանասարյան Դավիթ Տարոնի Պողոսյան Ժուրեմ Գագիկի Մարտիրոսյան Նարինե Սոսի	87	36	41.38%	1	0	0
			2605	947	36.35%	14	5	25

Քաղաքական համատեքստն ու նախընտրական մթնոլորտը

Թեև Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները գրեթե միշտ եղել են մրցակցային, այնուամենայնիվ ռեսուրսային ակնհայտ անհավասարության պայմաններում դրանց արդյունքները հիմնականում եղել են կանխատեսելի: Ընտրական գործընթացների պատմական համեմատությունը ցույց է տալիս, որ 2021 թ. արտահերթ ընտրությունների նախընտրական փուլում առկա բևեռացվածությունն աննախադեպ է:

Բևեռացվածությունը վերաբերում է հատկապես խոսույթային, վարքագծային մակարդակում առկա դրսևորումներին: Ատելության խոսքը, պիտակավորումը, հայհոյանքը, համակեցության որևէ նորմի չպահպանումը վառ արտահայտված են այս գործընթացներում: Իրավիճակի աննախադեպության վառ ցուցանիշ է այն, որ հազվադեպ է եղել, երբ քաղաքական հակառակորդները թիրախավորեն ընտանիքներին, հատկապես՝ երեխաներին: Ներկայումս գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ այս հանգամանքն անգամ զսպող արգելակ չի հանդիսանում: Նախընտրական լարված մթնոլորտն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, սակայն մտահոգիչ է, որ առկա է նման երևույթների աճի միտում:

Բռնության կոչերով, ատելության խոսքով, հայհոյախոսությամբ, սպառնալիքներով աչքի են ընկնում հատկապես ՔՊ կուսակցության, «Պատիվ ունեմ» և «Հայաստան» դաշինքների թեկնածուները, աջակիցները, նրանց հետ ասոցացվող այլ անձինք:

Օրինակ՝ Սյունիքի մարզում ծեծկռտուք է տեղի ունեցել իշխող կուսակցության կողմից նշանակված մարզպետի և «Հայաստան» դաշինքի առաջին համար՝ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի համակիր, Տաթևի համայնքապետի միջև, որն ունեցել է շարունակություն: Մեկ այլ դեպքում արձանագրվել է, որ Սյունիքի մարզի Կապան քաղաքում Ռ. Քոչարյանի աջակիցները պարբերաբար հավաքվում են գետամերձ տարածքում և սեռական բնույթի սադրիչ հայհոյանքներով ահաբեկող վարք դրսևորում այլ կարծիք ունեցողների նկատմամբ:

Ի հակառակ վերոնշյալ երեք ուժերի՝ խոսույթի մակարդակում ընդդիմություն-իշխանություն հակադրությանը ոչ բնորոշ պատշաճ վարքագիծ են դրսևորում խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնող՝ ԲՀԿ-ն և ԼՀԿ-ն: Դիտարկման ժամանակահատվածում այս երկու ուժերի առաջնորդների խոսքում չեն դիտարկվել թիրախավորված պիտակումներ, որակումներ և այլ բնույթի հայտարարություններ, որոնք ուղղված կլինեին իշխող ուժի կամ մյուս ուժերին և նրանց առաջնորդներին: Ի դեպ, խորհրդարարանում մեծությամբ երկրորդ խմբակցությունն ունեցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության այն ներկայացուցիչները, որոնք վերջին 2 տարիների ընթացքում առավել սուր հռետորաբանությամբ էին անդրադառնում Նիկոլ Փաշինյանի անձին, ներկայացված չեն ԲՀԿ նախընտրական ցուցակում:

Բացի իշխանություն–ընդդիմություն պայքարի ձևաչափից՝ մտահոգիչ է նաև ընդդիմադիր տարբեր թևերի միջև ոչ քաղաքական մրցակցությունը: Այդ մրցակցությունն ընթանում է վարչական ռեսուրսների տիրապետման (ՏԻՄ

ղեկավարներ, տեղական տարբեր հիմնարկների տնօրեններ և այլն), խոշոր գործատուների ուղղորդման և «ձայնային ձեռներեցներին» («տասովչիկների») սեփական ճամբարում տեղավորելու գործողություններով: Այս վերջին մրցակցության ձևաչափն ընթանում է լուռ՝ քրեական օրենքների վարքականոնների համաձայն:

Ներկա նախընտրական ժամանակահատվածում քաղաքական իրավիճակն առանձնահատուկ է նաև նրանով, որ առաջին անգամ ընտրությունների ժամանակ իշխանությունը չունի բավարար վարչական, ֆինանսական և այլ ռեսուրսներ՝ ամբողջապես կառավարելու և վերահսկելու քաղաքական գործընթացները: Միաժամանակ ընդդիմության որոշ ճյուղեր ունեն անհամեմատ զգալի մեծ չափով ֆինանսական ռեսուրսներ և բավականաչափ վարչական ռեսուրսներ՝ ընտրական գործընթացների վրա ապօրինի ազդեցություն ունենալու՝ ընդհուպ մինչև զանգվածային կեղծիքներ իրականացնելու համար:

Ուժային կառույցները նույնպես զերծ չեն քաղաքական գործընթացներից: ԱԱԾ, Ոստիկանության, քննչական մարմինների մի շարք պաշտոնյաներ ունեն քաղաքական նախապատվություններ, որոնք չեն թաքցնում: Ավելին՝ որոշ դեպքերում բացահայտ լծված են քարոզչություն իրականացնելու գործին: Բավական ակտիվ մասնակցություն են ունենում նախընտրական գործընթացներում նաև Հայ Առաքելական եկեղեցու սպասավորները, հատկապես՝ ընդդիմության շարքերում:

Դիտարկման ընթացքում արձանագրված խախտումները

Պաստառներ և դրանց վնասումը («Պաստառային առաջին պատերազմ»)

Նախընտրական քարոզչությանը նախորդող փուլում պաստառների համատարած տեղակայումը պատճառ դարձավ թեկնածուների մեկնարկային խիստ անհավասարության համար: Օրենսգիրքը սահմանում է, որ նախընտրական քարոզչության մեկնարկից առաջ վերացման են ենթակա 5 քառակուսի մետրը գերազանցող բոլոր այն պաստառները, որոնք ԿԸՀ-ն կամ տարածքային ընտրական հանձնաժողովը ճանաչում են ընտրությունների հետ ասոցացվող: Մայիսի 31-ին ԿԸՀ-ն 6 որոշում է կայացրել, որոնցով ընտրությունների հետ ասոցացվող են ճանաչել.

- Լևոն Շիրինյանի և Արման Բաբաջանյանի համատեղ լուսանկարով և «Շիրինյան-Բաբաջանյան Ժողովրդավարների Դաշինք» գրառմամբ պաստառները,
- Նորայր Նորիկյանի լուսանկարով և «Արդար Հայաստան» գրառումը պարունակող պաստառները և Սարգիս Զորանյանի լուսանկարով և «Արդար Հայաստան» գրառումը պարունակող պաստառները,
- «Տիգրան Արզաքանցյան Բարեգործական Հիմնադրամ. Ուժը՝ Մարդն է» գրառմամբ կամ նշված գրառմամբ և Տիգրան Արզաքանցյանի լուսանկարը պարունակող պաստառները,
- Ռոբերտ Քոչարյանի «Կյանք Եվ Ազատություն» գրքի պատկերով և «Հայաստանը Կառուցելիս» գրառմամբ պաստառները,
- «Արարատի Բարձրությունն է 5165 Մետր» գրառմամբ պաստառները,
- Էդմոն Մարուքյանի լուսանկարով և «Լուսավոր Հայաստան Կուսակցություն» գրառմամբ պաստառները

Դիտարկվող ժամանակահատվածում ԿԸՀ որոշումը բողոքարկվել է Ռ. Քոչարյանի փաստաբանների կողմից և ՀՀ վարչական դատարանը բավարարել է բողոքը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կրկին որոշում է ընդունել պաստառների վերացման վերաբերյալ, սակայն զեկույցի պատրաստման օրվա դրությամբ որոշումը չի կատարվել:

Նախորդ տարիներին պաստառների վնասումները նախընտրական փուլի առավել տարածված խախտումներից էին: Այս խախտումներն այժմ բնորոշ էին նաև քարոզչությանը նախորդող փուլին, որի ընթացքում փակցվել են ընտրություններում առաջադրված ուժերի առաջին դեմքերը պատկերող 5 քառակուսի մետրը գերազանցող պաստառներ, որոնք ֆորմալ առումով նախընտրական չէին:

- ՀՀ ողջ տարածքում փակցված են «Տիգրան Արզաքանցյան Հիմնադրամ» գրությամբ 5 քառակուսի մետրը գերազանցող պաստառներ, որոնցում պատկերված է Հայաստանի Դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակի 1-ին համար՝ Տիգրան Արզաքանցյանը: Այս դեպքում ըստ էության ոչ միայն խախտված է մեկնարկային հավասար հնարավորությունների սկզբունքն, այլ նաև բարեգործական հիմնադրամի խթանումն ու դրա միջոցով քարոզչության իրականացումն առերևույթ ընտրակաշառքի հանցակազմ է պարունակում: Պատկերված պաստառը Վանաձորում է:

- Առավել շատ և գրեթե բոլոր մարզերում վնասվել ու ոչնչացվել են Ռ. Քոչարյանի հեղինակած գիրքը պատկերող պաստառները: Պատկերված օրինակում Իջևան քաղաքում կարմիր ներկով ներկված պաստառ է:
- Լոռու մարզի Տաշիր քաղաքում կարմիր ներկով են ներկվել ԲՀԿ ղեկավար Գ. Ծառուկյանի պաստառները՝ փակցված կուսակցության գրասենյակին:

Բռնություններ և ճնշումներ

Դիտարկվող ժամանակահատվածում բռնության և ճնշումների, ծեծկռտուքների և վեճերի վերաբերյալ ահազանգերը հիմնականում վերաբերում են Սյունիքի մարզում Ռ. Քոչարյանի և Ն. Փաշինյանի համակիրների միջև ընդհարումներին:

- Օրինակ՝ Գորիսի Վանքի տափ կոչվող թաղամասում, որտեղ ապրում են Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ազգականները, վիճաբանություններ են տեղի ունեցել կանանց միջև, որի հետևանքով այդ թաղամասի շենքերից մեկում Ն. Փաշինյանի աջակից մի կնոջ ինքնազգացողությունը վատացել է: Ըստ ահազանգի՝ Ս. Խաչատրյանի ազգականները չեն թողել, որ այդ կնոջ համար ժամանած շտապ օգնության մեքենան մոտենա և առաջին բուժօգնություն ցուցաբերի:
- Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում ՔՊ ներկայացուցիչները հարձակվել և ձվերով հարվածել են «Հայաստան» դաշինքի շտաբին:
- Կապան քաղաքից ստացված ահազանգի համաձայն՝ քրեական որոշ խմբեր հավաքվում են քաղաքի մարդաշատ վայրերում և քրեական հակամշակույթին բնորոշ վարքագծով փորձում ահաբեկել մարդկանց, հատկապես՝ ՔՊ կուսակցության համակիրներին:

«Բարեգործություն» և ընտրակաշառքի այլ դրսևորումներ

Թե՛ դիտորդներից, թե՛ քաղաքացիներից ստացվում են բազմաթիվ ահազանգեր աննախադեպ բարձր և մեծ թվով ընտրակաշառքների վերաբերյալ: Սակայն զեկույցի պատրաստման պահի դրությամբ, կանխիկ վճարվող կոնկրետ ընտրակաշառքի դեպք արձանագրված չէ դիտորդների կողմից: Հարկ է նշել, որ սա չի ենթադրում, որ առկա չէ ցուցակագրում կամ նույնիսկ կանխավճարում: Ընտրակաշառքի առավել հաճախ կիրառվող սխեմայի պարագայում բազմանդամ ընտանիքների անդամներին ձևակերպում են որպես նախընտրական շտաբի աշխատողներ: Այս մեթոդն ըստ էության ընտրակաշառքի նպատակով վճարվող գումարի լեգիտիմացում է, որի դեպքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նախընտրական շտաբների ծախսերը չեն հայտարարագրվում, հիմնականում չկան աշխատանքային պայմանագրեր և արդյունավետ վերահսկողություն: Հստակ չէ, թե այդ անձինք ինչ կարգավիճակով են գտնվում շտաբներում, ինչ աշխատանք են կատարում կամ ընդհանրապես որևէ տեսակի աշխատանք կատարում են, թե՝ ոչ: Միաժամանակ արդեն իսկ արձանագրվել են դեպքեր, երբ ընտրակաշառքի նպատակով աշխատանքի վարձատրությունը ձևակերպվում է ոչ թե որպես քարոզչության հետ կապված գործունեության աշխատավարձ, այլ մրցակցող ուժերի բիզնեսներում ներգրավվածություն, որի միջոցով փաստացի ոչ միայն օրինականացվում է ընտրակաշառքը, այլ նաև աշխատանքային հարաբերություններով առավել երկարաժամկետ կախվածության հիմք է ստեղծվում:

Ընտրակաշառքի վերաբերյալ մինչև նախընտրական քարոզչության փուլը ստացված ահազանգերի գերակշիռ մասը վերաբերում է Սյունիքի և Կոտայքի մարզերին՝ «Հաաստան» դաշինքին և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը.

- Ընտրակաշառքի հետ ասոցացվող բարեգործության դեպք է գրանցվել Քարահունջ գյուղում: Գորիսի քաղաքապետի կողմից բնակիչներին տրամադրվել է դրամական օգնություն: Ըստ ստացված տեղեկությունների՝ մի շարք բնակիչներ նաև օգտվում են քաղաքապետին պատկանող շինանյութի խանութից՝ անվճար կամ զգալի զեղչերով:
- Գորիս համայնքում, սոցիալական աջակցության ծրագրերը 2021 թ. մայիս ամսին գրեթե կրկնապատկվել են նախորդ ամսվա համեմատ՝ հասնելով շուրջ ութ միլիոն դրամի: Համայնքի ղեկավարը առաջադրված է «Հայաստան» դաշինքի նախընտրական ցուցակով:
- Նույն Գորիս համայնքում «Հայաստան» դաշինքի կողմից առաջադրված ԱԺ պատգամավորության թեկնածու Վահե Հակոբյանի միջոցներով որոշակի վերանորոգման աշխատանքներ են ընթանում:
- ԲՀԿ-ի հետ ասոցացվող կառույցը վերագործարկել է Սիսիանի սպորտդպրոցը: Դպրոցը մինչ այդ գործել է ընդհատումներով: Այս փուլում բացվել են անվճար բարեգործական խմբակներ:
- Գորիսում, սահմանամերձ համայնքների օգնության հիմնավորմամբ, «Հայաստան» դաշինքի հետ ասոցացվող անձինք դիմահարդարման

դասընթացներ են կազմակերպում սահմանամերձ դարձած գյուղերի բնակիչների համար: Այս դասընթացների տրամադրման կապը ընտրությունների հետ պարզվել է նրանով, որ խմբերից մեկից փորձել են հեռացնել 17-ամյա մի աղջկա: Հեռացնելու որոշումը չեղարկվել է, երբ պարզել են, որ աղջկա 18 տարին լրանում է մինչև 2021 թ. հունիսի 20-ը:

- Վայոց Ձորում ԲՀԿ գրասենյակը օգնություն է տրամադրել պատերազմի մասնակիցների ընտանիքներին: Այս միտումն առկա է մի շարք այլ մարզերում ևս: Հաշվի առնելով Արցախյան վերջին պատերազմի հետևանքները՝ այս գործելաոճն ունի աճման միտում:
- Հունիսի մեկին Արմավիրի քաղաքային զբոսայգում կազմակերպվել է միջոցառում՝ մուլտհերոսներով, անվճար ատրակցիոններով, պաղպաղակի մատակարարմամբ, փուչիկներ բաժանելով ու երգ-երաժշտության կազմակերպմամբ: Այս մասին տոնի նախօրեին իր ֆեյսբուքյան էջում գրել է Նարինե Հովհաննիսյանը, որը հանդիսանում է «Արմավիրի կանանց խորհուրդ» ՀԿ–ի ղեկավարը: Նա հունիսի մեկի հանդիսության ժամանակ մի քանի անգամ նշել է, որ այս ամենը կազմակերպվել է ԲՀԿ ղեկավար Գ. Ծառուկյանի կողմից: Եվ հենց կազմակերպության էջում տեղադրել է իր լուսանկարը, հետևում ԲՀԿ դրոշի պատկերմամբ և կատարել գրառում՝ «Արտահերթ ընտրություններին ընտրում ենք 14 համարի քվեաթերթիկը» (ԲՀԿ):
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն Ավան վարչական շրջանում առնվազն 2 վայրում (Հին Ավանի 87-րդ դպրոցի բակում, ապա Դուրյան 33 շենքին հարող խաղահրապարում) համերգ-միջոցառումներ է կազմակերպել՝ օգտվելով Երեխաների պաշտպանության միջազգային օրվա՝ հունիսի 1-ի ընձեռած առիթից: Ընդ որում՝ համանման միջոցառումներ խաղավարների ներգրավմամբ կազմակերպել էր նաև Երևանի քաղաքապետարանը (իր ենթակայության ներքո գտնվող մանկապարտեզների բակերում): ԲՀԿ-ն մանկապարտեզի և դպրոցահասակ հարյուրավոր երեխաների բաժանել է ԲՀԿ դրոշակներ, երեխաների և նրանց ծնողների համար կազմակերպել են անվճար հյուրասիրություն: Միջոցառումներին անձամբ ներկա է գտնվել Ավան վարչական շրջանից ԲՀԿ պատգամավորության թեկնածու Գագիկ Պետրոսյանը՝ ԲՀԿ ակտիվի և օպերատորական խմբի մասնակցությամբ: Նախապես միջոցառման թռուցիկ-հրավերները փակցվել են վարչական շրջանի թաղամասերի էլեկտրասյուներին, վերելակներում ու բազմաբնակարան շենքերի բնակարանների մուտքի դռներին հետևյալ բովանդակությամբ՝ «Սիրելի ավանցիներ, Բարգավաճ Հայաստան կուսակցության Ավան վարչական շրջանի պատգամավորի թեկնածու Գագիկ Պետրոսյանը հունիսի 1-ին՝ ժամը 18:00-ից մինչև 20:00-ն Ավանի Դուրյան թաղամասի 33 շենքին հարող խաղահրապարակում հրավիրում է բոլոր երեխաներին՝ անցկացնելու ուրախ և անմոռանալի ժամանց հեքիաթային հերոսների հետ: Սիրով սպասում ենք Ձեզ»:

- Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, ԲՀԿ ղեկավար Գ. Ծառուկյանի նախաձեռնությամբ Աբովյան քաղաքում կազմակերպվել է մանկական միջոցառում:
- Երեխաների տոնը քարոզչական նպատակներով օգտագործելուց զերծ չի մնացել նաև «Պատիվ ունեմ» դաշինքի անդամ «Հայրենիք» կուսակցության Վանաձորի կազմակերպությունը՝ մայիսի 28-ին բարեկարգելով բնակելի շենքերից մեկի մանկական խաղահրապարակը և հունիսի 1-ին կազմակերպելով խաղահրապարակի բացումը՝ դաշինքի վարչապետի թեկնածու Արթուր Վանեցյանի մասնակցությամբ:[5]
- Հունիսի 4-ին Կոտայքի մարզի 321 շրջանավարտների Գ. Ծառուկյանի կողմից շնորհավորական բացիկներ, ծաղկեփնջեր և դրամական պարգևներ են տրվել:
- Կոտայքի մարզի Առինջ համայնքի Կոլյա Ծառուկյանի անվան դպրոցի շրջանավարտներին Գ. Ծառուկյանի անունից շնորհավորել է «ԵՌԿ»-ի ղեկավար Լիաննա Բաբայանը և փոխանցել խոշոր դրամական պարգևներ և ծաղկեփնջեր:
- Կոտայքի մարզի Քասախ համայնքի ղեկավարը շրջանավարտներին նվիրել է «Իշխանություն» ֆիլմի տոմսեր և տեղեկացրել, որ անձամբ է սպասելու շրջանավարտներին Մոսկվա կինոթատրոնի մուտքի մոտ: Հաշվի առնելով այդ ֆիլմի քաղաքական բովանդակությունը՝ սա սովորողներին քաղաքական գործընթացների և քարոզչության մեջ ուղղակիորեն և ակնհայտորեն ներքաշելու փորձ է:
- Արարատի մարզի Մասիս համայնքում փակցվել են հայտարարություններ այն մասին, որ տնտեսվարողների հետ խաղողի մթերման պայմանագրերը կկնքվեն անձնական այցերով: Սա առաջին անգամ կիրառվող պրակտիկա է՝ տնտեսական լծակի օգտագործմամբ: Հայտարարության մեջ շեշտվում է, որ այս մասին հրահանգել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գ. Ծառուկյանը:
- Դիտորդական առաքելությունը ահազանգ է ստացել այն մասին, որ Արմավիրի մարզի Քարակերտ, Բամբակաշատ և Նալբանդյան համայնքներում «Հայաստան» դաշինքի և մասնավորապես Արծվիկ Մինասյանի հետ ասոցացվող անձինք վճարել են մի շարք բնակիչների կուտակած հողի հարկերը և ջրի պարտքերը:
- «Որդուս» ՀԿ–ն հրապարակել է, որ Սյունիքի սահմաններ են տարվել զինվորների համար նախատեսված պարագաներ, այդ թվում՝ զինվորական վրաններ, քնապարկեր, հագուստ, սնունդ և հիգիենայի միջոցներ: «Որդուս» ՀԿ–ի հիմնադիրն է «5165» նախաձեռնության ցուցակի 1-ին համար Կարին Տոնոյանը:

[5] Երեխաների տոնին՝ երեխաների համար. նոր խաղահրապարակ Վանաձորում, https://bit.ly/3watBuF հասանելի է 10.06.2021 դրությամբ

- Երևանի Չարբախ թաղամասում ընտրակաշառքի առաջարկ է արվել ԲՀԿ-ի համակիրներ ներկայացող անձանց կողմից: Մեր տեղեկություններով այս դեպքով զբաղվում է ոստիկանությունը:
- Տիգրան Արզաքանցյանն իր բարեգործական հիմնադրամի միջոցով հունիսի 6-ին Գավառ քաղաքում կազմակերպել է միջոցառում երեխաների համար, որը նվիրված էր մանկական զվարճանքի կենտրոնի բացմանը: Այստեղ հստակորեն նույնանում են հիմնադրամի և առաջադրված թեկնածուի գործունեությունը՝ թե՛ արգելված ժամանակահատվածում բարեգործություն իրականացնելու, թե՛ Հիմնադրամի կողմից քարոզչություն իրականացնելու մասով, քանի որ երեխաներին բաժանվել են քարոզչական բուկլետներ, նվերներ, վերնազգեստներ, որտեղ առաջադրված թեկնածուի կուսակցության համարն ու լոգոն են, և հրապարակային կոչ է արվել ծնողներին տեղեկացնել քվեարկել հյուրասիրվող տորթի վրա գրված համարի օգտին:
- Դիտորդական առաքելությունն ահազանգ է ստացել Արարատի մարզի Ավշար գյուղից՝ Արայիկ և Մայիս Գրիգորյանների կողմից՝ ի նպաստ «Հայաստան» դաշինքի ընտրակաշառքի բաժանման դեպքի վերաբերյալ:
- Տարբեր ուժերի կողմից ընտրակաշառքի առաջարկի և ցուցակների հավաքագրման մի շարք ահազանգեր են ստացվել Վանաձորի «Գլորիա» ֆաբրիկայից:

Վարչական/բիզնես ռեսուրսների կիրառում

Ինչպես արդեն նշել ենք, այս ընտրությունների էական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վարչական ռեսուրսների ու լծակների տիրապետում է ոչ միայն իշխող ուժն, այլ նաև ընդդիմությունն, ում աջակցում են բազմաթիվ համայնքապետեր՝ ՀՀ ողջ տարածքում: Արձանագրված դեպքերից մեկում «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչը ենթադրյալ չարաշահման մասով հայտարարություն է ներկայացրել Էջմիածնի քաղաքապետի դեմ: Մյուս բոլոր դեպքերում ավելի շատ գործ ունենք ընդդիմության կողմից վարչական ռեսուրսի կիրառման հետ: Ընդհանուր դիտարկմամբ հստակ է, որ ընդդիմադիր համայնքապետերի զգալի մասը լծված է քարոզչություն իրականացնելուն (նաև աշխատանքային ժամերին): Նրանք են նաև ապահովում «Հայաստան» դաշինքի մարզային հանիպումների մասնակիցներին: Վարչական ռեսուրսի չարաշահման հետ կապված որոշ դեպքեր ներկայացված են ստորև.

- ըստ ստացված ահազանգերի՝ Գյումրի քաղաքում՝ դպրոցների տնօրենների մասնակցությամբ ուսուցիչներին փորձել են ուղղորդել տարբեր կերպերով Բարգավաճ Հայաստան և Լուսավոր Հայաստան խմբակցությունների անունից (միգուցե առանց նրանց իմացության) ներգրավելու տեղամասային ընտրական հանձնաժողովներում: Ըստ ստացված տեղեկությունների՝ այս գործընթացն իրականացվում է «Պատիվ ունեմ» և «Հայաստան» դաշինքների հետ ասոցացվող անձանց կողմից:

- Դիտարկված ժամանակահատվածում վարչական ռեսուրս կիրառել է նաև իշխող ուժը: ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի, մի շարք նախարարների պաշտոնակատարների մարզային այցերին իրենց աշխատանքային ժամերին մասնակցել են մարզպետներ, մարզպետարանների աշխատակիցներ՝ իրենց աշխատանքային ժամերին կամ չգտնվելով արձակուրդի մեջ:
- Սյունիքի մարզում հավաքներին հարկադրված մասնակցել են «Հայաստան» դաշինքի հետ ասոցացվող գործարարների աշխատակիցներ և համայնքային հիմնարկների աշխատակիցներ:
- Վարչական ռեսուրսի չարաշահում են նաև համայնքային բյուջեի հաշվին տրամադրվող աջակցության դեպքերը, որոնք նկարագրվել են ընտրակաշառքների ահազանգերին վերաբերող հատվածներում:
- Փոսային նորոգումների աշխատանքներ են մեկնարկել Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Ըստ ստացված տեղեկատվության՝ այս գործողություններն իրականացվում են «Հասյաստան» դաշինքի օգտին՝ համայնքային բյուջեի հաշվին փաստացի ապահովելով նաև որոշ անձանց ժամանակավոր զբաղվածությունը:

Աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրներ

Աշխատանքային իրավունքների խախտումն ընտրական գործընթացում ամենատարածվածներից և միաժամանակ ամենաբարդ փաստագրվողներից է: Հաշվի առնելով Հայաստանում առկա սոցիալական խնդիրները, գործազրկության մակարդակը՝ աշխատանք ունեցողները խուսափում են խոսել այս մասին և ենթարկվում են գործատուների ապօրինի հրահանգներին՝ միայն բացառիկ դեպքերում ընդվզելով քաղաքական հայացքների պատճառով հետապնդման դեմ: Սա վկայում է շարունակվող համակարգային խնդրի՝ աշխատանքային իրավունքների պաշտպանված չլինելու իրողության մասին:

Այս առումով ահազանգերի հիմնական մասը ներկայացված է այլ բաժիններում: Ստացված ահազանգերը վերաբերում են խոշոր գործարաններին, բժշկական կենտրոններին, մասնավոր այլ հիմնարկներին և ՏԻՄ աշխատակազմերին: Ահազանգերի զգալի մասը վերաբերում է ընդդիմության կողմից ֆինանսական և տնտեսական կախվածության օգտագործմանը:

- Բացի վերոնշյալ դեպքերից, թե՛ լրատվամիջոցներում, թե՛ դիտորդների կողմից արձանագրվել է «Գազպրոմ Արմենիա» հիմնարկի աշխատակիցների զանգվածային մասնակցությունը «Հայաստան» դաշինքի՝ Երևանում կազմակերպած հանրահավաքին:

«Անկախ դիտորդ» դաշինքի կողմից իրականացված գործողությունների ամփոփում

Նախաքարոզարշավային շրջանի երկարաժամկետ դիտարկման տարածքը ներառում է ՀՀ ողջ տարածքը: Դիտորդական առաքելության մեջ ներառված են 24 դիտորդներ:

Հետևյալ ժամանակահատվածում դիտարկվել և քարտեզագրվել են.

- Գործող կուսակցությունների գրասենյակները,
- Նոր բացվող կամ բացված կուսակցությունների գրասենյակները,
- Տվյալ տարածքում գործող հասարակական կազմակերպությունները,
- Տեղային զանգվածային լրատվական միջոցները (այդ թվում՝ տեղական նշանակության ֆեյսբուքյան մեծ լսարան ունեցող էջերը):

Քարտեզագրվել է գործող.

- 267 կուսակցական գրասենյակ (նաև նախընտրական շտաբի գործառույթներ կատարող),
- 68 հասարակական կազմակերպություն,
- 43 տեղային ՁԼՄ:

Դիտարկվել է.

- 7 հավաք Երևանում,
- 3 հավաք Գեղարքունիքում (Գավառ և Մարտունի քաղաքներում),
- 2 հավաք Շիրակում (Գյումրի),
- 3 հավաք Սյունիքում,
- 3 հավաք Լոռիում,
- 1 հավաք Արմավիրում:

Հավաքների մասնակիցների հետ անցկացվել է 42 հարցազրույց:

Դիտարկվել է 103 կուսակցական գրասենյակ, նախնական հարցազրույց է անցկացվել 74 կուսակցական գրասենյակների ներկայացուցիչների հետ:

Հարցազրույց է անցկացվել 34 ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

Բացի ընդհանուր ահազանգերից՝ գրավոր արձանագրվել է, որոնցից.

- 6 դեպք առնչվում է քարոզչական պաստառի վնասմանը,
- 2 դեպք դիտորդին ծպտյալ նկարելուն,
- 1 դեպք կուսակցական գրասենյակի աշխատանքների ենթադրյալ խոչընդոտմանը (Ազգային–ժողովրդավարական բևեռ),
- 1 դեպք վարչական ռեսուրսի կիրառմամբ կուսակցության գործունեության ենթադրյալ խոչընդոտմանը («Հայաստան» դաշինքի նկատմամբ՝ Էջմիածնի քաղաքապետի կողմից),

- 1 դեպք ընտրողների տվյալների հավաքագրմանը և ուղղորդմանը («Հայաստան» դաշինքի ներկայացուցիչների կողմից),
- 1 դեպքում դիտորդին տևական հետևել են Երևանի Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանում:

Ձեկուցվող ժամանակահատվածի դիտարկումների առնչությամբ Դաշինքը կատարել է հետևյալ գործողությունները.

1. ***Հարցում***

   Դիտորդի կողմից տրված տեղեկատվության հիման վրա 11.05.2021 թ. կազմվել է հարցում ուղղված ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն՝ մարզում պաստառների վնասման առնչությամբ քրեական գործ հարուցված լինել-չլինելու հարցը պարզելու նպատակով:

2. ***ՀՀ դատախազություն ներկայացված հաղորդում***

   ՀՀ դատախազություն հաղորդում է ներկայացվել «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից առաջադրված թեկնածու Միհրան Պողոսյանի կողմից առերևույթ կեղծ փաստաթուղթ ներկայացնելու փաստի վերաբերյալ: Հաղորդումը կազմվել է 03.06.2021թ.-ին: Հաղորդման կազմման հիմքում դրված է եղել թեկնածուի կողմից կեղծ փաստաթուղթ ներկայացված լինելու վերաբերյալ ինտերնետային թերթի կողմից կատարված հրապարակումը:

3. ***Վիճակագրություն***

   Հաշվի առնելով Գորիս համայնքում սոցիալական աջակցության աննախադեպ աճի վերաբերյալ առկա ահազանգերը՝ Գորիս համայնքի ղեկավարի համապատասխան որոշումներում առկա տեղեկատվության հիման վրա կազմվել է վիճակագրություն 01/01/2021 թվականից մինչ 01/06/2021 թվականն ընկած ժամանակահատվածում բնակիչներին տրված դրամական օգնությունների վերաբերյալ՝ դրամական օգնության չափ/ օգնություն ստացած բնակիչների քանակ հարաբերակցությամբ:

«**Անկախ դիտորդ**» **դաշինքի մասին**

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը հիմնադրվել է 2017 թ. հունվարին:

2021 թ. թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ դիտարկումն իրականացվում է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ հետևյալ կազմակերպությունների կողմից.
- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ,
- Իրազեկ քաղաքացիների միավորում,
- Ուղղակի ժողովրդավարություն,
- Գյումրու առաջընթաց,
- «Ռեստարտ Գյումրի» /Գյումրու «Ռեստարտ նախաձեռնությունների կենտրոն» ՔՀՁ ՀԿ,
- Կանանց իրավունքների տուն:

Ձեր կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ կարող եք ահազանգել հետևյալ հեռախոսահամարներով.

Twitter: @IndObserverArm

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer

E-mail: independentobserverarm@gmail.com